ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒ ՑՆԾՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Մեր փառապանծ Կարմիր Բանակի մղած պայքարը ֆաշիզմի վերջնական ջախջախման և ոչնչացման գործում պսակվեց լիակատար և փառավոր հաղթանակով։

Մայիսի 9-ը, ֆաշիստական վտանգի առհավետ ոչնչացման օրը, դարձավ հաղթանակի ու ցնծության տոն Սովետական Միության մեծ ընտանիքի բոլոր ժողովուրդների համար։

Մայիսի 9-ը հաղթանակի ցնծության ու բերկրանքի տոն դարձավ հայ ժողովրդի համար և առնվեց ժողովրդական անպատում խանդավառությամբ։ Դա այն երկրորդն է, համառ ու հերոսական պայքարի հաղթանակով պսակված օրն է, որ մղեցին բոլոր ազատասեր ժողովուրդները գերմանական ֆաշիզմի դեմ։

Այդ փառավոր հաղթանակը, որ տարվեց բարբարոսների դեմ մղված ահեղ մարտերում, անջնջելիորեն կապված է Սովետական Միության և հերոսական Կարմիր Բանակի հետ։

Գերմանական հորդաները պատերազմի առաջին տարիներին կատաղի հարձակումներով խուժեցին Սովետական երկիրը և ավեր ու ասպատակ սփռելով հասան Մոսկվայի դռներին։

Իր անվտանգակ աջողությամբ ու Սովետական յայնածավալ երկիրը գավթելուսին երազով ցնդված հրեշը նույնիսկ սողաց Ստալինգրադ։ Դա բարբարոսության ապոթեոզն էր, որ տոնում էր ցնծացող գազանը։ Նրա անցած դժխեմ ուղին մահ էր, ավեր ու ասպնդ, անմեղների նախճիր ու արյուն, որի մեջ գալարվում էր թունավոր իժը։

Նա չարիքն էր, որ ժողովուրդներին բերեց հալածանք ու փորձանք, կողոպուտ ու թալան, հազարավոր ու տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց՝ ծերերի ու երիտասարդների, կանանց ու տղամարդկանց, մանկահասակ աղջիկների ու տղաների, օրորոցի մանուկների գազանաբարո սպանություն ու լկանք։

Ֆաշիզմը մոխրակույտի վերածեց տասնյակ հազարավոր չեն գյուղեր, հազարավոր գեղեցիկ ու մարդաշատ քաղաքներ, սվերեց ու հողին հավասարեցրեց միլիոնավոր աշխատավորների քրտինքով աճեցրած փարթամ այգիներն ու ծաղկափթիթ դաշտերը, դատն աշխատանքով ու քրտինքով կառուցված բազմաթիվ գործարանները, ֆաբրիկաները, երկաթուղիները, կամուրջները և այլն։

Ֆաշիզմը արյամբ արբեցած ոտնակոխ արավ մեր երկրի դարավոր սրբությունները, եկեղեցիները, վանքերը, քաղաքներում կանգնեցված գիտության ու արվեստի հոյակապ տաճարները, կործանեց հինավուրց կոթողները։

Նա հինարար հավիտակեց մեր չքեղազարդ պալատների, վանքերի ու տաճարների, թանգարանների, դրադարանների, պերճ թատերասրահների միլիոնավոր հարստություններն ու գանձերը։

Նա խլեց մեր ժողովրդի հացը, նրա անասուններն ու հոտերը և ամայի դարձնե-

լով մեր երկիրը սովամահության մատնեց մեր ժողովրդին:

Ֆաշիզմը կատարեց ամենազարհուրելի ու քամնեցուցիչ ոճիրը, որի առաջ նսեմանում են Ներոնի ու Սուլլայի գազանությունները. նա շղթայակապ արավ և դերեվարեց հազարավոր մարդկանց ու ստրկական ծառայության մատնելով տանջեց ու խեղդամահ արավ նրանց:

Խավարի ու մահվան սև ուրվականն էր պտտում Ֆաշիզմի բռնագրաված բոլոր երկրներում, սովալլուկ կանանց, դալկահար մանուկների հուսահատ հառաչանքներն ու դառն հեծկլտանքն էին լսվում ամենուրեք:

Եվ ահա հնչեց վրեժխնդրության ու արդար ցասումի ձայնը: Թնդանոթների որոտը աշխարհին ավետեց Ֆաշիստական գազանի ջախջախումը իր սեփական որջում:

Հասավ վրեժխնդրության ահեղ վայրկյանը: Կարմիր Բանակի ուժգին հարվածի տակ ընչասպառ ընկավ և նրա գարշապարի տակ առհավետ տրորվեց մահաբեր խիզը:

Բացվեց մայիսի 9-ի գեղածիծաղ առավոտը: Հնչեց հաղթանակի շեփորը և աշխարհը ողջունեց խաղաղության ավետիքը:

Ողջո՛ւյն հաղթական մայիսին:

Ողջո՛ւյն այդ հաղթանակը բերող հերոսական Կարմիր Բանակին և նրա խմաստուն ղեկավար և հանճարեղ առաջնորդ մեծ Ստալինին:

Հավե՛ջ փառք մեր Մեծ Հայրենիքի ազատության համար զոհված սուրբ նահատակներին:

Անհուն երախտագիտության ջերմ զգացմունքով համակված մենք խոնարհվում ենք ձեր սուրբ աճյունի առաջ, ո՛վ ազատության հերոս մարտիկներ: